Արձանագրություն N 2
« ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/126» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան **07.09.2020թ.**
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Աբրահամյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Քալանդարյան, Գ. Սաֆարյան, Գ. Խարբության,, Ա. Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/126» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն

(Ռ. Աբրահամյան)

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝
Խնդրում ենք տալ պարզաբանում.

1. Տեղեկացնում ենք, որ հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռների գումարը անցնում է 100%-ից կազմելով 120.84%:
2. Ըստ նախագծի պետք է տեղադրվի կոնդենսացիոն կաթսա 100 կՎտ պատից կախովի, սակայն տեղեկացնում ենք, որ պահանջվող կոնդենսացիոն կաթսան(100 կՎտ Fondital Tahiti condensing line tech) նախատեսված է գետնին տեղադրելու համար:

Հայտնում ենք՝
Ի պատասխան Ձեր կողմից պահանջված պարզաբանման, խնդրում եմ հիմք ընդունել հետևյալ ճշտումները.

1. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/126» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հարցման տեղեկացնում եմ, որ նախահաշվի մեջ ներառված սարքավորումների վրա չեն կիրառվում (Վերադիր ծախսեր-13.3%, փոքր ծավալի ՇՄԱ- 1.5%, շին աղբի տեղափոխում-0.15% և շահույթ-11%) տոկոսները:

Ուստի ծավալաթերթ-նախահաշվի բաժինների համար սահմանված առավելագույն կշիռների գումարը վերոնշյալ տոկոսների բացակայության դեպքում(սարքավորումների վրա) կազմում է 100%:

2. Ըստ նախագծի պետք է տեղադրվի կոնդեսացիոն կաթսա 99 ԿՎտ պատից կախովի /Lamborgini TORO W 99 կամ համարժեքը/ մոդելի:

Ուղղակի տեղի է ունեցել սխալմունք և մնացել է հին տեղադրված կաթսայի անունը /100 կՎտ Fondital Tahiti condensing line tech կամ համարժեքը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման հրավերում փոփոխություն կատարելու մասին

(Ռ. Աբրահամյան)

1.1 «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/126» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, որոշեց հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.2 Ծավալաթերթ-նախահաշվում ներկայացվող 100 կՎտ Fondital Tahiti condensing line tech կաթսան փոխարինել 99 ԿՎտ պատից կախովի /Lamborgini TORO W 99 կամ համարժեքը/ մոդելի կաթսայով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. **Գնանշման հարցման** հրավերի փոփոխված տեքստը հաստատելու մասին.
3 **Գնանշման հարցման** հայտարարության փոփոխված տեքստը հաստատելու մասին.
4. **Գնանշման հարցման** հայտարարության և հրավերի ռուսերեն լեզվով տեքստը հաստատելու մասին.
5.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Գնանշման հարցման փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Գնանշման հարցման փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

6. Գնանշման հարցման հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հարավիրել ս.թ. սեպտեմբերի 15-ին, ժամը 10:30-ին, ք. Երևան, Արգիշտի փողոց 1 հասցեում՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի 321 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Աբրահամյան

Անդամներ՝ ---------- Մ. Քալանդարյան

---------- Գ. Սաֆարյան

---------- Գ. Խարբության

---------- Ա. Մնացականյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան